

ԿԱՐՄԻՐԲԱՆԱԿԱՅԻՆԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

Զ Ի Ն Վ Ո Ր Ա Կ Ա Ն
Հ Ե Ղ Ա Փ Ո Խ Ա Կ Ա Ն

ԽՍՏԱԳՈՒՅՆ ԴԻՍՑԻՊԼԻՆԱՆ
ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ
ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՆ Ե

ГОБРАЗОВАТЕЛЬНЫЙ ЭКСПЕДИЦИОН



355
Զ-63

ԵՆԳԻՆԻՐԱՎԱՍՅՈՒՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
ՔՐԶԱՔՐԵԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

11 MAR 2010

ԿԱՐՄԻՐԲԱՆԱԿԱՅԻՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

355

*

Ձ-63

44

**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈՒՆԿԱՆ
ԽՍՏԱԿՈՒՅՆ ԴԻՍՑԻՊԼԻՆԱՆ
ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ
ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՆ Ե**



ԱՆԿՐԿՈՂԿԱՍՑԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԹԻՒՒՄԻ

1940

40.359

19 APR 2013



3034
40

«Յես, հարիդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ֆաղափսցիս, մտնելով Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի շարքերը, ընդունում եմ յերդում և հանդիսավորապես յերդվում եմ լինել ազնիվ, ֆաջ, կարգապահ, զգաստ վարտիկ, խստորեն պահել ուսման կան և պետական գաղտնիքը, առանց առարկության կատարել գինվարական բոլոր կանոններն ու հրամանատարների, կոմիսարների և պետերի հրամանները»:

ԳԻՍՑԻՊԼԻՆԱՆ ՅԱՐԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԲԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Ամեն մի բանակի դիտցիպլինայի էյուլթյունն ու բնույթը կախված է այն բանից, թե վոր հասարակությանը և վոր դասակարգին է ծառայում տվյալ բանակը: Յուրաքանչյուր հասարակական կարգի հատուկ են իր աշխատանքի դիտցիպլինան և դիտցիպլինան բանակում:

Ճորտատիրական բանակներում դիտցիպլինան հիմնվում էր դեպի գինվորի մարդկային արժանապատ-

վուժյունն ունեցած լիակատար արհամարհանքի վրա :
Վայրենի մուշտրան, ծեծը, բացարձակ իրավա-
զըրկուժյունը, ծառայութեան տաժանակիր պայ-
մանները հետապնդում էին մի նպատակի՝ զինվորին
դարձնել սպայի կույր, հլու գործիքը . «Գյուղացուն
զինվորութեան էլին տալիս, վորպես յերկարամյա
տաժանակրութեան վորտեղ նրան սպասում էին «կա-
նաչ փողոցի»*) տմարդի տանջանքները,—ասում էր
ԼԵՆԻՆԸ Նիկոլայ 1-ին թագավորի եպիստայի մա-
սին : Գաղանակային դաժան դիսցիպլինա մտցնելու
համար ժողովուրդն այդ թագավորին կնքեց Նիկոլայ
Պալին անունով :

Կապիտալիստական հասարակութեան մեջ աշխա-
տանքի դիսցիպլինան հիմնված է գործազրկութեան և
սովի սարսափի վրա : Կապիտալիստական հասարա-
կութեան մեջ սովի այդ ամենագորությունը գունադեղ
կերպով նկարագրել է Նեկրասովը «Յերկաթուղի» բա-
նաստեղծութեան մեջ .

«Աշխարհում արքա կա . անդուժ է այդ արքան .
Սով է անունը նրա .
Բանակներ է վարում նա, ծովում նավեր
կառավարում . դեպի արտեյներ ջրում մարդկանց .
Ընթանում է խովի հետեվից ,
Քարտաշների , ջուլհակների գլխին է կանգնած» . . .

*) «Կանաչ փողոց»—պատիժ, վորը գործադրվում էր ու-
սական բանակում Նիկոլայ 1-ի թագավորութեան ժամանակա-
շրջանում և հետո, ու կայանում էր նրանում, վոր հանցադործ
զինվորին տանում էին յերկարք զինվորների միջով, վորոնք
պատժվողին հերթով ծեծում էին դազանակներով :

ԿԱՐԼ ՄԱՐԻՍԸ իր «Կապիտալ» յերկի մեջ պատ-
մում է, թե բուրժուազիան սովալլուկ, հողագործի
գյուղացիներին ինչպիսի հրեշավոր տեսողով էր սո-
վորեցնում վարձու աշխատանքի դիսցիպլինային :
Մտրակներ, տանջանքներ, ամենավայրենի բանու-
թյուններ և մահվան պատիժ—այդ բոլորը գործադր-
վում էր, վորպեսզի կարելի լինի գյուղացիներին սո-
վորեցնել աշխատանքի նոր, կապիտալիստական դիս-
ցիպլինային :

Տասնյակ ամենարգմագան, բայց միանման դա-
ժան միջոցներ են գործադրվում նաև կապիտալիստա-
կան ձեռնարկություններում այն հյուծող աշխատան-
քի դիսցիպլինան արմատավորելու համար, վորը քայ-
քայում է բանվորի Փիզիկական ուժերը :

Աշխատանքի ջրտնաբեր սիստեմի գործադրումը,
շտրեյկբրեյկներին բանակի ոգտադործումը, բանվո-
րին մեքենայի կցուկը դարձնելը՝ իր ուժասուղու անող
ոխիթմով, բոլորն ուղղված է առ այն, վոր կարելի լի-
նի բանվորից քամել նրա բոլոր ուժերը, նրա բոլոր
հյուժերը :

Գործադուրկների այն ամբոխները, վորոնք ամեն
րոպե պատրաստ են վարձվելու ում մոտ էլ լինի, ու-
ժեղացնում են բանվորի կախումը տիրոջից, ստիպում
են նրան հպատակվելու վերջինիս ամեն մի կամայա-
կանութեան և նույնիսկ հանդուրժելու տուգանքների
շաղկր սիստեմը : Բանվորների կողպամամն նոր միջո-
ցի այդ սիստեմը, ըստ ԼԵՆԻՆԻ արտահայտութեան,
հանդիսացավ «խոշոր Ֆարբիկաների և գործարաննե-
րի հետ միասին յսոշոր կապիտալիզմի հետ միասին . . .
Կապիտալիզմի լիակատար դարդացման և բանվորի
լիակատար ստրկացման հետեվանքը» :

Կապիտալիզմը աշխատանքին զրկում է իր ներքին տեղծագործական բովանդակութիւնը: Կապիտալիզմը ամայացնում է աշխատանքը, «... մարդուց յլում է Ֆրիդիկական և հոգեկան աղատ գործունեութեան ամեն մի հնարավորութիւնը» (ՄԱՐԿՍ):

Ահա կապիտալիզմի կողմից ստեղծված աշխատանքի այդ դիսցիպլինային համապատասխանում է նաև կապիտալիստական յերկրներ թանակներ ղեկսցիպլինայի բնույթը:

Կապիտալիստական, ազգային և հոգեկան ճնշում, քաղաքական իրավազրկութիւն, բռնութիւն և կամայականութիւն—այդ բոլորն արտացոլված է կապիտալիստական բանակների ղեկսցիպլինայի մեջ:

Չարական բանակի ղեկսցիպլինայի բնույթը նույնպէս բնորոշվում էր այն հասարակական կարգով, վորը տիրապետում էր Ռուսաստանում:

«... Ռուսաստանը,—ասում էր ընկեր ՍՍԱԻՆԸ,— ամեն տեսակի ճնշման ոջախ էր— թե՛ կապիտալիստական, թե՛ զաղութային, թե՛ ռազմական,— վերցրած իր ամենատմարդի ու բարբարոսական ձեւով»:

Կալվածատերերի և կապիտալիստների կամայականութիւնը, քաղաքական ու ազգային ճնշումը, բարբարոսութիւնը, անկուլտուրականութիւնը, ծաղր ու ծանակը՝ բանվորի ու գյուղացու անձնավորութեան նկատմամբ, ճորտատիրութեան մնացորդները—այդ բոլորն իր արտացոլումն էր գտնում ցարական բանակում:

ԼԵՆԻՆԸ 1901 թ. փետրվարի 2-ին «Իսկրա» թերթում տպագրեց մի հոդված «183 ռուսանոցների զինվոր տալը» վերնագրի տակ, ուր պատմում է Կիևի հեղափոխականներն տրամադրված ռուսանոցներ

ի համար ցարիզմի հնարած յուրահատուկ պատժի մասին: Նրանց այս անպամ բանտ չնստեցրին, մտաբանեցին չծեծեցին: Նրանց զինվոր ուղարկեցին այն բանի համար, վոր նրանք այնտեղ փորձեն ցարական զորանոցի բոլոր հրապույրները:

Ռուսանոցներին, վորպէս պատիժ, զինվոր ուղարկեցին:

«... զորանոցը,— գրում էր ԼԵՆԻՆԸ,— ամբողջովին համակված է ամենավրդովեցուցիչ իրավազրկութեան վրդով: Գյուղացիներին կամ բանվորներին վերցված գինվորի լիակատար անպաշտպանութիւն, մարդկային արժանապատվութեան վրտնահարում, չորթում, ձեծ, ձեծ և ձեծ: Իսկ նրանց համար, ովքեր ազգիցիկ կապեր ու փող ունեն,— արտոնութիւններ և բացառութիւններ: Զարմանալի չէ, վոր կամայականութեան ու բռնութեան այդ դպրոցը տալը կարող է պատիժ լինել, և նույնիսկ, շատ ծանր պատիժ, վորը մոտենում է իրավունքների զրկմանը»:

Յեւ այնուհետեւ ԼԵՆԻՆԸ նկատում է.

«Կառավարութիւնը հույս ունի «խռովարաներին» այդ դպրոցում կարգապահութիւն սովորեցնել»:

Լենինյան այդ խոսքերում հիանալի կերպով բացահայտված է ցարական բանակի ղեկսցիպլինայի էությունը: Այդ ղեկսցիպլինան պահպանվում էր դադանակով, ձեծով, մարդու արժանիքի նվաստացումով: Ժողովրդական վշտի յերդիչ նեկրասովը պայծաս կերպով նկարագրել է ցարական բանակի զինվորի կյանքը, զինվորի, վորը թունավորված էր դազանային մուշտրայով և պատիժներով.

«Աշխարհը նողկալի
Հավերժ ճշմարտագուրկ,

Կյանքը հար դղվելի,
Ֆափերն ուժեղ ու բյուր...

...Փամփուշտներ գերմանական,
Փամփուշտներ թյուրքական,
Փամփուշտներ Ֆրանսիական
Դադանակներ՝ ուուսական»:

Ֆարական բանակում զինվորից գործի նկատմամբ
լնալ զխտակցական վերաբերմունք չեյին պահանջում,
բանի վոր ցարական կառավարության համար շատ ա-
վելի հանդիստ էր ունենալ իր ձեռքում կույր գործիք
հանդիսացող բանակ:

Կապիտալիստական յերկրներէ բանակներում դիս-
ցրլլլինայի և զինվորի դաստիարակության վողջ սիտ-
տեմը ուղղված է առ այն, վոր շինել հաղած բան-
վորներին ու գյուղացիներին կարելի լինի դարձնել
կուրորեն գործող մեքենա, խրտվիլակ, վորը մեքենա-
յորեն կատարում է պետկազմի կամքը և, վորը չունի
վոչ իր մտքերը, վոչ իր կամքն ու ցանկությունները:
Բուրժուազիան ամեն կերպ ջանում է զինվորին ան-
ջտտել ժողովրդից, մթազնել նրա դասակարգային
զխտակցությունը: Բուրժուազիայի համար ձեռնտու
չէ և վտանգավոր է, յեթե զինվորները հասկանան
կապիտալիստական պետության էյությունը և կապի-
տալիստական բանակի դասակարգային էյությունը:

Յերբ զինվորն սկսում է հասկանալ, վոր կապիտա-
լիստական բանակի դիսցրլլինան կապիտալիստական
ձնչման շարունակությունն է, նա անխուսափելի կեր-
պով հանգում է այն հետեւության, վոր պետք է վո-
չընչացնել բուրժուազիայի տիրապետությունը: Ահա
թե ինչու կապիտալիստական բանակի դիսցրլլինան

պահանջում է վոչ թե զխտակցականություն, այլ կույր
հպատակություն: Ահա թե ինչու բուրժուական պե-
տություններում զինվորական ծառայողները զրկված
են քաղաքացիական իրավունքներից: Նրանց արգել-
ված է ընտրել և ընտրվել պառլամենտում: Ահա թե
ինչու զորանոցներում արգելվում է թերթեր կարդալ
և խոսակցություններ ունենալ քաղաքական թեմանե-
րի շուրջը:

Ամեն ինչ ուղղված էր առ այն, վոր կարելի լինի
վոչնչացնել զինվորի անձնական արժանապատվության
դրացմունքը, պրոլետար յեւ գյուղացի զինվորանե-
րին դասակարգայնորեն յենթարկել ազնվականական-
բուրժուական սպայությանը:

Բուրժուական բանակը, — ասում է ԼԵՆԻՆԸ, — «չին
կորգերի պաշտպանման ամենավտակարացած գործիքն
է, բուրժուական դիսցրլլինայի, կապիտալի տիրա-
պետության պաշտպանման, աշխատավորների ստրկա-
կան հնազանդության պահպանման ու դաստիարակ-
ման և կապիտալին նրանց յենթարկելու ամենակարծ-
րացած պատվարն է»:

Ձինվորի զխտակցությունը բթացնելու, տիրող
դասակարգերի ձեռքում նրան կույր գործիք դարձնե-
լու համար կապիտալիստական յերկրներէ բանակների
սպաները դիմում են դադանային մուշտրային:

Նախկին լեհական բանակում, բացի կանոնադու-
թյամբ նախատեսված պատիժներից, լայնորեն գոր-
ծադրվում էյին դանազան ծաղր ու ծանակներ, վոր
հարել էյին իրենք՝ սպաները: Որինակ, այդպիսի
ծաղրանքներից մեկն էր այսպես կոչված՝ «ПОД ЛУШКО,
НА ЛУШКО». Լիովին զինված զինվորին մահճակալի
վրայից քշում էյին մահճակալի տակ և հետ, այնքան

Ժամանակ, մինչև վոր այդ «խաղը» կձանձրացնէր
կայրալին կամ դասակարգութիւն:

Գոյութիւն ունէր նաև այսպիսի պատիժ: «Ձգաստ»
դրութիւնից լիովին զինված զինվորին ստիպում է ին
ընկնել յերեսն ի վար:

Ահա թե ինչպես է նկարագրում զինվորական ծա-
ուայութիւնը նաև ինչ լեհական բանակում Ա. Ռուզ-
նիցկին «Ձինվորներ» գրքում:

«Կայրալ Սկովրոզան հրապուրվում էր հրաման-
ներ տալով: Նա աղջատում էր հրամանի խոսքերը,
հրամաններն արձակում էր մերթ կիսաձայն, մերթ
չչունջով, մերթ գոռոցով... Այդ բութ մարդը մարդ-
կանց կարող էր տանջել անվերջ, մինչև լիակատար
հյուծումն և ուժերի կորուստը: Նա հրամայում էր.
«Նստիր, վեր կաց», միասին վերցրած բոլոր յենթա-
սպաներից շատ ավելի հաճախ: Այդ նա յեր, վոր
մտցրեց պրպզած թոխչքներ կատարելը, թոխչքներ՝
սնդուկները գլուխներին և մի ամբողջ շարք ուրիշ
զգվելի ծաղրանքներ... Դա հարցուրապատիկ ավելի
ծանր տանջանք էր, քան ծեծը, քանի վոր շարունակ-
վում էր ամեն որ և անընդհատ...»

Չորանոցում տիրում էր կեղծիքն ու յերկերե-
սանիութիւնը... «Սեվը» «սպլտակ» է յին անվանում,
բանի վոր պետք էր հենց այդպես վարվել, վորպեսպի-
յավ համարում ունենաս... Ահա թե ինչ էր զինվորա-
կան ծառայութիւնի դպրոցը մարդկային բնավորու-
թիւնների ճնշող մեծամասնութիւնի համար: Վոչ թե
արիութիւնի դպրոց, վոչ թե դժվարութիւնների հաղ-
թահարման դիտութիւն, այլ յերկերեսանիութիւնի
կլասիկ դպրոց, կեղծիքի ու յերեսպաշտութիւնի դի-
տութիւն»:

«Կլասուպիլիցը, —ասում է ընկեր Վորոյլովը,—
մտցրեց «բանակի ռազմական արիութիւն» հատուկ
հասկացողութիւնը, վորի բովանդակութիւնի մեջ խո-
չորագույն տեղ է հատկացվում դիսցիպլինային: Նա
պնդում էր, վոր այդ արիութիւնը վողեվորված բա-
նակը «նույնիսկ պարտութիւնների սարսափների մեջ
չի կորցնում վստահութիւնը դեպի իր պետերը յեվ
մնում է նրանց հնազանդ»: Նկարագրելով առանձին
մարտիկի, Կլասուպիլիցը ասում էր, վոր մարտիկի
քաջութիւնը պետք է սարբերվի նովորական մարդու
քաջութիւնից. մարտիկը իր քաջութիւնը պետք է
յենթարկի բարձրագույն կարգի ու կանոնի պահանջ-
ներին՝ հնազանդութիւնը (դիսցիպլինային—կ. վ.),
կարգ ու կանոնին, կանոնադրութիւնն ու մեթոդին»:

Լեհական բանակը մի քանի օրվա ընթացքում փըլ-
վեց վորպես քարտե անակ, վորովհետեւ նա բզկա-
վում էր դասակարգային և աղբային հակասութիւն-
ներից, վորովհետեւ զինվորներն ու սպաները չունե-
լին դասակարգային շահերի միասնութիւն: Լեհական
բանակի դիսցիպլինան շահագործող դասակարգերի
դիսցիպլինա յեր, Լեհաստանում բնակվող բազմաթիւ
ազգութիւնների աշխատավորներից բաղկացած զին-
վորական մասային խորթ ու թշնամի դիսցիպլինա
յեր:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄԱՐՏԻԿԻ ԴԻՍԾԻՊԼԻՆԱՆ

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխու-
թիւնը, վորը նոր դարաշրջան բացեց մարդկութիւն
պատմութիւնի մեջ, արմատից փոխեց վերաբերմունքը
դեպի աշխատանքը: Շահագործողների համար կա-

տարվող անազատ աշխատանքը փոխարինվեց ազատ աշխատանքով՝ իր համար, իր դասակարգի համար, զորջ հասարակութեան համար: Ուստի «...խորհրդային հեղաշրջման ժամանակից սկսած, — գրում էր ԼԵՆԻՆԸ, — սոցիալիստական հեղափոխութեան սկզբից սկսած դիսցիպլինան պետք է ստեղծվի միանգամայն նոր սկզբունքների վրա, դեպի բանվորների ու շքավորագույն գյուղացիների կազմակերպածութունը ցեղած մատահութեան դիսցիպլինա, ընկերական դիսցիպլինա, ամեն տեսակի հարգանքի դիսցիպլինա, պայքարում ինքնուրույնութեան և նախաձեռնութեան դիսցիպլինա»:

Պրոլետարիատի դիկտատուրան ստեղծեց նոր բանակ, նոր դիսցիպլինա, ղեկավարական նոր կազմակերպութուն:

Հեղափոխական ժողովրդի բանակը այժմ պաշտպանում է վոչ թե մի խումբ շահագործողներին շահերը, այլ աշխատավորների շահերը, ժողովրդական մասսաների շահերը:

«...Բանվորներն ու գյուղացիները, — ասում էր ընկեր ՍՍՍՀԻՆԸ Կարմիր Բանակի յերեք առանձնահատկութունների մասին արտասանած ճառում, — աշխարհում առաջին անգամն են ստեղծել իրենց սեփական բանակը, վորը ծառայում է վոչ թե տերերին, այլ նախկին ստրուկներին, ներկայումս ազատագրված բանվորներին ու գյուղացիներին»:

Այդպիսի նոր բանակ կարող էր կառուցվել միմիայն դիկտակցական սոցիալիստական դիսցիպլինայի վրա: Աշխատավոր մասսաների մեջ այդպիսի դիսցիպլինայի ծագման մասին խոսում էր ԼԵՆԻՆԸ 1918 թ. հոկտեմբերին:

«...Յեթե այժմ այդ մասսաները ստեղծեցին նոր դիսցիպլինա Կարմիր Բանակի մեջ, վոչ թե դաշտանակի ու կարվածատիրական դիսցիպլինա, այլ Բանվորական ու Գյուղացիական Դեպուտատներին Սորհուրդներին դիսցիպլինա, յեթե նրանք այժմ գնում են դեպի մեծագույն ինքնագոհարարութունը, — յեթե նրանց մեջ ստեղծվել է նոր համակարգվածութուն, ապա դա այն պատճառով, վոր տասնյակ միլիոնավորների դիկտակցութեան մեջ առաջին անգամ ծնվում է և ծնվել է նոր սոցիալիստական դիսցիպլինան, ծնվել է Կարմիր Բանակը»:

Այնուհետև ԼԵՆԻՆԸ ընդդոմ էր, վոր սոցիալիստական դիսցիպլինան կարող էր ծագել այն բանի հետևանքով, վոր մասսաները համոզվեցին իրենց ուժի անխորտակելիութեան մեջ: Դեն չպրտելով կարվածատերերին և կապիտալիստներին, մասսաներն իրենք, առանց նրանց, մատահորեն կառուցում են նոր կյանքը:

Կապիտալիստներն ու կարվածատերերը պնդում են յին, թե բանվորներն ու գյուղացիները առանց դաշտանակի չեն կարող ապրել, վոր առանց տերերի կարգ ու կանոն սահմանող, աշխատանք բաշխող, աշխատանք կազմակերպող չի լինի: Սակայն բանվոր դաշտակարգը, վորին համախմբում ու կազմակերպում է յին ինքը՝ կյանքը, ինքը՝ դրութունը կապիտալիստական հասարակութեան մեջ, կարողացավ իր շուրջը համախմբել գյուղացիութեանը, կարողացավ ստեղծել հաղթական բանակ չտեսնված ամբողջու դիսցիպլինայով:

Այդ դիսցիպլինան արմատապես տարբերվում է այն դիսցիպլինայից, վորը հայտնի յե կապիտալիստ-

տական հասարակութեանը: Նրա հիմքում դրված են բոլշևիստական սկզբունքներ, վոր Լենինը ձեռնարկել է հետեւյալ կերպ.

«... դիսցիպլինայի դործադրման բոլոր հին միջոցներն ու աղբյուրները քանդված են, մեր դործունեյութեան հիմքում մենք դնում եյինք մտածվածութեան ու դիտակցականութեան միայն բարձր աստիճանը: Դա մեզ հնարավորութեան էր տալիս իրականացնելու այնպիսի դիսցիպլինա, վորը շատ բարձր է կանդենած ուրիշ պետութեան դիսցիպլինայից, և վորը հենվում է այնպիսի բազիսի վրա, վորը նման չէ այն դիսցիպլինային, վորը շարունակում է պահպանել հաղիմ-հաղ, յեթե դեռևս կարող է պահպանվել, կատարելատեան հասարակութեան մեջ»:

Մարտիկների բարձր դիտակցականութեան վրա հիմնված սոցիալիստական դիսցիպլինան հանդիսանում է Կարմիր Բանակի ամենաաչքի ընկնող դժերից մեկը: Կատարելատեան աշխարհում անդունդ կա բանակի և ժողովրդի միջեւ, իսկ մեզ մոտ Կարմիր Բանակն ու խորհրդային ժողովուրդը կազմում են մի ամբողջութեան, մի ընտանիք: Ահա թե ինչու այնքան մեծ է խորհրդային ժողովրդի սերը դեպի Կարմիր Բանակը: Ահա թե ինչու յուրաքանչյուր կարմիրբանակայինին հատուկ է դեպի իր ժողովուրդը, դեպի իր հայրենիքը տածած սիրո ամենաազնիւ ըզրացմունքը: Յուրաքանչյուր մարտիկ խորհրդային բոցավառ հայրենասեր է:

Սորհրդային Յերկրում գինւորական ծառայութեանը ներկայացնում է ԽՍՀՄ քաղաքացիների պատվաւոր պարտականութեանը:

Բարձր պատիւ է՝ կրել Բանւորա-Գյուղացիական

Կարմիր Բանակի մարտիկի կոչումը, բայց և բարձր է Կարմիր Բանակի յուրաքանչյուր մարտիկի պատասխանատւութեանը Հայրենիքի հանդեպ: Ժողովուրդը Կարմիր Բանակի մարտիկի կոչումով ոժտված իր գազակներէց պահանջում է «լինել ազնիւ, քաջարի, կարգապահ, զգաստ մարտիկ, խստորեն պանել ուղմական յեւ պետական գաղտնիքը, առանց առարկուքյան կատարել գինւորական բոլոր կանոնները և երամանատարների, կոմիսարների ու պետերի հրամանները»:

Այդ խոսքերը—գինւորական յերդման խոսքերն են: Գրանցում արտահայտված են մեր եպոխայի մարդկանց ամենաազնիւ, լայնազուն դժերը և սպառնչարդողութեամբ ձեռնարկելով ձեռքի կանոնները, վորոնք ապահովում են քաջարի Կարմիր Բանակի անպարտելիութեանը:

Կարմիր Բանակը իր մարտական հզորութեանը միշտ ամբաստնել է նոր, հեղափոխական յերկաթե գինւորական դիսցիպլինայի՝ հիման վրա:

Լենինը, գնահատելով քաղաքացիական պատերազմի ուղիմահակատներում տարած հաղթանակը, դրում էր.

«Յեթե մտածելու լինենք այն մասին, թե վերջիվերջո ինչն էր դրված այն բանի ամենախոր հիմքում, վոր այդպիսի պատմական հրաշք տեղի ունեցաւ վոր թույլ, ուժասպառ, հետամնաց յերկիրը հաղթեց աշխարհի ամենաուժեղ յերկրներին, այսպէս մենք տեսնում ենք, վոր դա կենտրոնացումն է, դիսցիպլինան յեւ չլսված ինքնազոհաբերումը»...

Ընկեր USU.ԼԻՆԸ 1918 թվականին, գնահատելով

Կարմիր Բանակի մարտական հաջողութիւնները, ա-
սում եր, վոր՝

«Մեր բանակի հաջողութիւնները բացատրվում են
ամենից առաջ նրա զիտակցականութեամբ և զխոցելա-
լինայով: Կրասնովի զինվորները աչքի յին ընկնում
զարմանալի բթամտութեամբ և տղիտութեամբ, ար-
տաքին աշխարհից լիակատար կտրվածութեամբ նրանք
չդիտեն, թե ինչի համար են պատերազմում: «մեզ
հրամայել են, և մենք հարկադրված ենք կռիւլ» —
ասում են նրանք հարցաքննութիւններին՝ դերի ընկած
ժամանակ: Այդպէս չե մեր կարմիր բանակայինը:
Նա հպարտորեն իրեն անվանում է հեղափոխութեան
զինվոր, նա դիտե, վոր պատերազմում է վոչ թե
կադիտալիստների շահույթների համար, այլ Ռուսաս-
տանի աշտոագրման համար, նա այդ դիտե և հա-
մարձակ կերպով գնում է դեպի կռիւլ բաց աչքերով:
Կարգ ու կանոնի և զխոցելալինայի ծարաւը կարմիր
բանակայինների մեջ հասնում է մինչ այն բանի, վոր
հաճախ նրանք իրենք են պատժում իրենց «անհնա-
զադ» և քիչ կարգապահ ընկերներին»:

ԼՆՆԻՆԻ ու ՍՏԱԼԻՆԻ այդ խոսքերում բացահայտ-
ված է զինվորական զիտակցական զխոցելալինայի
վիթխարի նշանակութիւնը Կարմիր Բանակի վոչ
միայն անցյալ, այլև դալիք հաղթանակներում:

Կարմիր Բանակը իր շարքերում դաստիարակել է
նոր տիպի այնպիսի ղեկավարների, ինչպիսիք են՝
Փրոբնգեն, Վորոչիլովը, Բուդյոնին: Պրոլետարական
հրաշալի զորախորհուրդը շատ են աշխատել այն բանի
վրա, վորպէսզի բանակում կազմակերպեն այնպիսի
զխոցելալինայ, վորը, ըստ ԼՆՆԻՆԻ և ՍՏԱԼԻՆԻ խոս-

քերի, հանդիսանար նրա հաղթանակների գլխավոր
պատճառը:


Փողովրդական ընածին հերոսներ՝ Չապայեւը,
Շչորբը, Պարխոմենկոն, Կոտովսկին, Չկալովը և ու-
րիշները բարձր ելին գնահատում խիստ կազմակերպ-
վածութիւնն ու կարգ ու կանոնը կռիւմ և իրենք
իրենց կյանքով ցույց տվին կարգապահութեան հրա-
շալի որինակներ: Նրանք իրենց մարտիկներին նույն
եյին պահանջում:

Շատ բանվորներ և գյուղացիներ, կամավոր կեր-
պով մտնելով քաղաքացիական պատերազմի տարիներ-
բին Կարմիր Բանակի շարքերը, զինվորական յերդ-
ման ընույթ կրող գրավոր պարտավորութիւն-
ներ ելին հանձն առնում: Նրանք պարտավոր-
վում ելին խստիվ պահպանել զինվորական զխոցելա-
լինան, անվերապահ կերպով յենթարկվել հրամա-
նատարներին հրամաններին, ինամքով վերաբերվել
դեպի հանդերձանքի, ռազմահանդերձանքի և սպառա-
գինման բոլոր առարկաները, հիշելով, վոր դա ժո-
ղովրդական սեփականութիւնն է:

Հեղափոխական յերդման հրաշունչ խոսքերն են և
վելի ելին համախմբում մարտիկներին, նրանց դարձ-
նում ելին միմյանց հարադատ և ամբաստնում ելին
Կարմիր Բանակի շարքերը: Շչորսականները, չապա-
յեւականները, բուդյոնականները բուլչեիկյան յերդում
ելին տալիս՝ ամբայնդել Կարմիր Բանակի զխոցելալի-
նան: Իրենց յերդումը նրանք կատարում ելին մեծա-
ղուն յողեվորութեամբ: Յեվ թշնամիները Չխիշխի-
վեցին բոլոր ռազմաճակատներում:

Քաղաքացիական պատերազմի կռիւների կրակում
Կարմիր Բանակը, վորին ղեկավարում էր ԼՆՆԻՆԻ—

3034
40



ՄՏԱԼԻՆԻ մեծ կուսակցութեանը, դառնում եր խորհրդային պետութեան հզոր, կարգապահ հաղթական մեծ ուժը:

«Կարմիր Բանակը հաղթեց այն պատճառով, վոր կարմիր Բանակի թիկունքի ու ճակատի ղեկավար կորելը բուլեիկները կուսակցութեանն եր, —միասնական՝ իր համախառնութեամբ ու ղիսցիպլինայով, ուժեղ՝ իր հեղափոխական վողով և ընդհանուր զործի հաջողութեան համար ամեն տեսակ զոհաբերութեանները ղիմելու իր պատրաստակամութեամբ, չլրգեբաղանցիված՝ միլիոնավոր մաստաներին կազմակերպելու և բարդ պայմաններում նրանց ճիշտ ղեկավարելու իր հմտութեամբ» («Համկ(բ)Կ սրատմութեան համառոտ դասընթաց»):

Ինտերվենտների ու սպիտակգվարդիականների հրոսակախմբերի դեմ Կարմիր Բանակի տարած հաղթանակները կազմակերպման զործում հսկայական դեր խաղացին ղիմվորական կոմիսարները: Չիմվորական կոմիսարները՝ բուլեիկները կուսակցութեան և խորհրդային կառավարութեան այդ ներկայացուցիչները Կարմիր Բանակում՝ ղիմվորական ղիսցիպլինայի ու կազմակերպութեան որինակ, քաջութեան ու խիզախութեան օրինակ էին քաղաքացիական պատերազմի տարիներին:

Չիմվորական կոմիսարները իրենց բուլեիկյան անդուլ աշխատանքով ցեմենտում էին կարմիր բանակայինների շարքերը: Նրանք կարմիր բանակայինների մեջ արմատավորում էին ղիսցիպլինայի և մարտական խիզախութեան վողին: Չիմվորական կոմիսարները յեռանդուն կերպով, արագորեն ու անխնայորեն

խափանում էին հրամանատարական կազմի սուսնեին անձերի ղալաճանակական ղործողութեանները:

Չիմվորական կոմիսարները Կարմիր Բանակի մեջ մտցրին ղիսցիպլինայի և կազմակերպութեան այն վողին, վորը բնորոշ է բուլեիկյան կուսակցութեան համար նրա վողջ պատմութեան ընթացքում, ղիսցիպլինայի այն վողին, վոր մեր կուսակցութեանը պատկաստում էին պրոլետարիատի մեծ առաջնորդներ ԼԵՆԻՆՆՆ ու ՄՏԱԼԻՆԸ:

Պայքարելով հեղափոխական մարքսիզմի թշնամիները դեմ, հանուն բուլեիկյան կուսակցութեան, ԼԵՆԻՆՆՆ ապացուցեց, վոր առանց յերկաթե ղիսցիպլինայի՝ կուսակցութեան մեջ, չի կարելի իրականացնել պրոլետարիատի ղիկաատուբայի ինդիքները շահագործողներին ճնշելու և անդասակարգ հասարակութեան կառուցելու դծով: ԼԵՆԻՆԸ սովորեցնում էր, վոր պրոլետարիատի ղիկաատուբայի ինդիքները անհնարին է իրականացնել առանց աշխատավորների առաջավոր ջոկատի, նրա ավանդաբղի, նրա միակ ղեկավարի՝ պրոլետարիատի կազմակերպութեան յեմ կարգապահութեան:

Բուլեիկյան կուսակցութեան բոլոր թշնամիները համար, սկսած «եկոնոմիստները» և վերջացրած արոցկիստական-բուխարինյան մարդասպաններով ու ղիլեբրասնոներով, հատուկ է, ըստ ԼԵՆԻՆԻ արտահայտութեան, «ղիսցիպլինան ծաղրանքի յեմթարկելը» և «ստեղծութեանը ղիսցիպլինայի նկատմամբ»: Մանր բուրժուական սանձարձակութեան ներկայացուցիչներ՝ մենչևիկները կուսակցութեան կառուցման լենինյան պլանի դեմ մղած պայքարում առանձնապես կատաղիորեն հարձակվում էին ԼԵՆԻՆԻ վրա՝

կուսակցութեան շարքերում յերկաթե դիպցիպլինա մացնելու նրա պահանջի համար: Բանվոր դասակարգի թշնամիները զգում էին, վոր դիպցիպլինան յեզ կազմակերպվածութունը բոլշևիկների կուսակցութեան ուժի ու անպարտելիութեան պատճառներէջ մեկն է:

Ընկեր ՄՏԱԼԻՆՆ ասում էր, վոր կուսակցութունը «...անկաղմակերպ անկուսակցական բանվորների միջկոծաւոր մասսաների մեջ պետք է մտցնի դիպցիպլինայի և սլանաչափութեան վրդի՝ պայքարում, կազմակերպվածութեան և տոկունութեան վրդի»:

Բոլշևիկյան կուսակցութեան Ցորդ համալուծարում, 1919 թվականին, պայքարելով դաւաճաններ և մատնիչներ Տրոցկու և Կո. դեմ, վորոնք ժխտում էին զինվորական յերկաթե դիպցիպլինայի անհրաժեշտութիւնը բանակում, վորոնք կանոնաւոր բանակի փոխարեն պաշտպանում էին պարտիզանականութիւնը, Լենինն ընդգծում էր վոր հաղթանակի համար հարկավոր է կանոնավոր, դիպցիպլինայի յեմֆատիված Կարմիր Բանակ:

Ընկեր ՄՏԱԼԻՆԸ, հանդես դալով այդ նույն համազումարում, պահանջում էր ստեղծել յերկաթե դիպցիպլինայի վրդով տողորված կանոնավոր բանակ:

«...Կամ, —ասում էր ընկեր ՄՏԱԼԻՆԸ, —կատեզծենք խկական բանվորա-գյուղացիական, առաջնայն պեա գյուղացիական, խխտ դիպցիպլինայի յեմֆատիված բանակ և կպաշտպանենք հանրապետութիւնը, կամ կկործանվենք»:

Յերկաթե դիպցիպլինայի և կազմակերպվածութեան հենց այդպիսի վրդի յել մտցնում են Կարմիր Բանակի մեջ բոլշևիկյան պանծալի կոմիսարները, զատ-

տիարակելով ԲԳԿԻ վրդ կազմը զինվորական հեղափոխական յերկաթե դիպցիպլինայի վրդով, այն կանոնադրութիւնների, հրահանգումների և հրահանգների անշեղ կատարման վրդով, վորոնցով բնորոշվում է յուրաքանչյուր զինվորական ծառայողի վարքը կենցաղում, ուսման մեջ և կովում: Հենց դրանով կարելի յե բացատրել մեր քաջարի կարմիրբանակայինների պանծալի հաղթանակները Խասանի և Խալիբի-Գոլի մոտ: Բախկան է հիշել Խորհրդային Միութեան Հերոս կոմիսար Պոժարսկու լեղենդար կերպարը, վորն իրեն համար նվաճեց մեր Հայրենիքի քաջարի պաշտպանի հավիտենական փառքը: Ճապոնական զորքերը, վորոնց ջարջախեցին առաջին Սուան-ձին Կարմրադրոջ բանակի հերոսական մարտիկները, իրենց կաշվի վրա զդացին, թե ինչպիսի քաջութեան հրաշքներ են ցույց տալիս կարմիրբանակայինները, վորոնք բոլշևիկյան դիպցիպլինայով համախմբված են անպարտելի զորազնդերի մեջ:

Կատարելով խորհրդային կառավարութեան հրամանը Արեւմտյան Ուկրաինայի և Արեւմտյան Բելոսուսիայի աշխատավորներին՝ արենակից յեղբայրներին յեղբայրական ոգնութիւն ցույց տալու մասին, Կարմիր Բանակը նորից ցույց տալեց բոլշևիկյան տոկունութեան, քաղաքական բարձր գիտակցութեան, զինվորական յերկաթե դիպցիպլինայի բացառիկ որինակներ:

Չինվորական դիպցիպլինան այն կարգ ու կանոնի ճիշտ պահպանումն է, վոր Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակում սահմանված է որենքներով յեզ կանոնադրութիւններով և պաշտպանում է պետերի հրամաններով ու կարգադրութիւններով: Չինվորա-

կան ղիսցիպլինան յուրաքանչյուր ղինյորական ծառայողի մեջ մշակում է՝ սովորունություն, կամքի ամբողջուն, հնարագիտություն, փութաջանություն, սաղմական կյանքի գրկանքներն ու ծանրությունները տանելու սովորություն, բարեխղճություն՝ ծառայության պարտականությունները կատարելու դործում և անձնադոհության ընդունակություն՝ սոցիալիստական Հայրենիքի պաշտպանության իր սրատվայնոր պարտականությունը կատարելու ժամանակ:

Մբանք են Կարմիր Բանակի մարտիկի հատկությունները: Դա յե նոր ղիսցիպլինան՝ անհայտ մյուս բանակներին, սոցիալիստական պետության սոցիալիստական բանակի ղիսցիպլինան:

Աշխարհում և վուչ մի բանակում չի յեղել և չի կարող լինել այնպիսի վոդեվորություն, այնպիսի ղիսցիպլինա և այնպիսի ռազմական արիւթյուն, ինչպիսին հատուկ են Կարմիր Բանակին, վորը կոչված է պաշտպանելու աշխատայնոր մարդկության իղեալները:

**ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ—
ԱՆԽԱՍՏ ՈՐԵՆՔ ԵՆ**

Կարմիր Բանակն իր մեջ ներծծել է ղինյորական կուլտուրայի վողջ բազմամյա փորձը և ունի պանծալի մարտական տրագիցիաներ: Կարմիր Բանակի բարձրը կազմակերպվածությունն ու մարտական վարժանքը՝ առանձին մարտիկից մինչև խոշոր միավորումը՝ հիմնված է ռազմական ամենատաղայնոր մտքի վրա:

Կարմիր Բանակի վողջ կյանքն ու ուսուցումը կա-

սուցվում է խստորեն սահմանված կարգով: Այդ կարգը վորոշված է մեր կանոնադրություններով, հրահանգումներով, ձեռնարկներով յեվ հրահանգներով: Կարմիր Բանակի կանոնադրությունները—դա ղինյորական բազմամյա առաջնոր կուլտուրայի թանձրույցն է, դա ԽՍՀՄ-ում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի և Կարմիր Բանակի ալեյի բան բանամյա շինարարության մեծադույն փորձն է: Կարմիր Բանակի կանոնադրությունները սրբադործված են այն հերոսների արյունով, վորոնք իրենց կյանքը նվիրեցին հանուն սոցիալիզմի, հանուն մեր Հայրենիքի անկախության և ժողովուրդների յերջանկության:

ԲԳԿԻ կանոնադրություններում և հրահանգումներում պարունակվում է Կարմիր Բանակի մարտիկների, հրամանատարների, կոմիսարների և քաղաշխատողների բազմակողմանի կոչեկտիվ փորձը, ամբողջ խորհրդային ժողովրդի փորձը, վոր նա կուտակել է մեծ սոցիալիստական Հայրենիքի և Կարմիր Բանակի պաշտպանունակությունն ամրապնդելու դործում:

1938 թ. ԲԳԿԻ հետեվակի Մարտական կանոնադրության մշակման դործում ակալիվ մասնակցություն ունեյին դումարտակների, վաշտերի, դասակների և ջոկատների հրամանատարները: Հատուկ հանձնաժողովների կազմի մեջ, վորոնք ջննարկում էյին կանոնադրության նախադիժը, հրամանատարական կազմի հետ միասին մտնում էյին կրտսեր հրամանատարներ, ղորաղնային ղալրոցների կուրսանտներ յեվ կարմիր բանակայիններ: Այդ հանձնաժողովները, ջրնաարկելով կանոնադրության նախադիժը, տեղում ըստուգում էյին նրա բոլոր դրույթները և մտցնում ե-

յին մի շարք արժեքավոր ուղղումներ և լրացումներ :

Մեր կանոնադրութ յուններէ պահանջները—պա-
ԼԵՆԻՆԻ—ՍՍՍԼԻՆԻ կուսակցութեան և խորհրդային
կառավարութեան պահանջներն են, յամբողջ խորհրդային
Ժողովրդի պահանջներն են : Միշտ պատրաստ լինել կովի
մտնելու և անշեղորեն ձգտել վոչնչացնել ու հաղթել
թշնամուն, յուրաքանչյուր մարտիկի և հրամանա-
տարի հեղափոխական սրբունքն է : «Մարտիկը կովի
ամենածանր պայմաններում չպիտի կորցնի հոգու ա-
ռույգութիւնը, հիշելով, վոր նա Բանվորա-Գյուղա-
ցիական Կարմիր Բանակի մարտիկ է» :

«Լենինով անսահման կերպով նվիրված ԼԵՆԻՆԻ—
ՍՍՍԼԻՆԻ մեծ գործին, Հայրենիքին և բոլշեվիկյան
կուսակցութեանը, մարտիկը չպետք է խնայի վոչ իր
ուժերը, վոչ կյանքը սոցիալիզմի գործի և ժողովուրդ-
ների յեղբայրութեան համար մղվող պայքարում»
(Հետեւյալի մարտական կանոնադրութիւնը) :

Քաղաքացիական պատերազմի դաժան տարիներին,
յերբ սպիտակազարդ թակահանները և ինտերվենտները
ջանում էին խեղդել խորհրդային իշխանութիւնը,
ԼԵՆԻՆԸ կոչ էր անում Խորհրդային հանրապետու-
թեան աշխատավորներին՝ «... Ընկերներ, կովեցեք
մինչեւ արբան վերջին կաթիլը, պայքարեցեք ամեն
մի թիզ հողի համար, յեղեք կայուն մինչեւ վերջ,
հաղթանակը հետու չէ : Հաղթանակը մերը կլինի» :

Յերբ Վլադիկավկազը քաջարի կերպով պաշտպան-
վում էր սպիտակ բանդաներից, Սերգո Որջոնիկիձեն
հեռազրեց ԼԵՆԻՆԻՆ. «... Արիւր ու փամփուշտներ
չկան : Դրամ չկա... Վեց ամիս է պատերազմում ենք,
փամփուշտները գնում ենք—5-ական ուռբով» :

Սպիտակների դեմ պայքարի պայմաններն ու իրա-

զբուէթյունը Վլադիկավկազում այն ժամանակ իրաք
ծաղրահեղ դժվարին էյին : Բայց վոչ մարտիկները,
վոչ Սերգո Որջոնիկիձեն հողեպէս չեյին ընկճվում :
Քյոչ նույն հեռազրում ընկեր Որջոնիկիձեն ԼԵՆԻՆԻՆ
համաստիացնում էր. «... ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼԻՉ, հաղոր-
դելով Ձեզ այդ մասին (մանրամասնութիւնները
փոստով), համաստիացնում եմ, վոր մենք բոլորս
կընկենք անհավասար կռիւում, բայց մեր պատիւը
փախուստով չենք արատավորի... Գրողու, Վլադի-
կավկազի բանվորների շրջանում անհողորդը և վորո-
շումը՝ կովել և չհեռանալ...» :

Քաղաքացիական պատերազմի հերոսական տրա-
դիցիաներով ԼԵՆԻՆԻ—ՍՍՍԼԻՆԻ մեծ գործի համար,
մեր Հայրենիքի ազատութեան ու անկախութեան հա-
մար կովելու մինչեւ վերջին փամփուշտը, մինչեւ
վերջին շունչը—քաղաքացիական պատերազմի հերո-
սական տրադիցիաներով են համակված Կարմիր Բա-
նակի կանոնադրութիւնները :

ԲԳԿԻ Հետեւյալի Մարտական կանոնադրութիւնը
մարտիկից պահանջում է համարձակութիւն և նախա-
ձեռնութիւն : «Հրամանատարի վիրավորվելու և նրա
շարքից դուրս գալու դեպքում մարտիկը համարակ
կերպով պետք է իր վրա վերցնի յեղբարածանուճի
հրամանատարութիւնը, ցուց տալով վճռակամու-
թեան ու արիւթեան որինակ, իր հետեւից տանելով
իր ընկերներին և շարունակել կռիւը, համառ կերպով
ձգտելով հաղթանակի յեւ վոչնչացնել հակառակոր-
դին» : Պատան լծի մոտ տեղի ունեցած կռիւներում
կուսակցութեան թեկնածու՝ մարտիկ Յակիմովը,
կրտսեր հրամանատարի վիրավորվելուց հետո, իր
վրա վերցրեց հակառակադէմ թեզանութի հրամանա-

տարութեանը և հաջողութեամբ կատարեց մարտահան խնդիրը: Կուսակցութեան թեկնածու՝ մարտիկ Պերցովսկին Սասան լճի մոտ ճահճարատ պարանոցով անցնելիս նշանակիկեց ջուհարի հրամանատար: Հրամանատարութեան այդ մտահուշութեան ընկեր Պերցովսկին պատմով արդարացրեց: Նրա ջուհարը հիանալի կերպով կատարեց մարտական պատասխանատու առաջադրութեանը,

Կարմիր Բանակի կանոնադրութեանները պահանջում են մարտիկներից և հրամանատարներից թշնամունք մոռնալուց մասին առաջադրված խնդիրը կատարել ինչ գնով էլ լինի, չնայելով վոչ մի դժվարութեան: Կանոնադրութեաններին այդ պահանջը ամբողջ խորհրդային ժողովրդի պահանջն է: ԲԳԿԻ կանոնադրութեանները պարզ ու հստակ կերպով բնորոշում են այն նպատակը, վորին պետք է ձգտել, և սովորեցնում են մարտիկին ու հրամանատարին, թե ինչպես պետք է դործել այս կամ այն դեպքում, այս կամ այն իրադրութեան մեջ:

Կարմիր Բանակի կանոնադրութեանները զինվորական ծառայողներից պահանջում են կռվի դաշտում անպայման ցույց տալ իրար ընկերական փոխադարձ ոգևորություն և փոխադարձորեն փրկել միմյանց: Փոխադարձ ոգևորության բարձրագույն ձևն է դորքի բոլոր տեսակների մարտական փոխդորձակցութեանը: Կանոնադրութեաններին փոխդորձակցութեան, փոխադարձ ոգևորության և փոխադարձ փրկութեան վերաբերյալ պահանջները—որենք է Կարմիր Բանակի յուրաքանչյուր մարտիկի համար, թշնամու հանդեպ զենք արյունով հաղթանակ ձեռք բերելու գլխավոր պայմաններից մեկն է:

Կարմիր Բանակի կանոնադրութեանները ժամանակակից կռվի վոչ միայն առաջավոր դպրոցն են, այլև ուղեվիկյան մարտիկի կուռնիստական դաստիարակութեան դպրոցը: ԲԳԿԻ կանոնադրութեաններն իմանալը և ճիշտ կատարելը Կարմիր Բանակի մարտիկներին պատվաստում է քաղաքական բարձր գիտակցականութեան, կազմակերպվածութեան և կուլտուրականութեան գծեր:

«...Կարմիր Բանակում,—ասում է ընկեր Վորոշովը,—մարդիկ զարգացնում ու ամրապնդում են այն գծերը, վորոնք հասուն են սոցիալիստական նոր մարդուն: Յերիտասարդ բանվորը, գյուղացին և ծառայողը զինվորական ծառայութեան տարիներին անճանաչելիութեան չափ փոխվում է: Կարմիր Բանակի և նավատորմի շարքերից հեռանալու մոմենտին նա պատնում է արդեն քաղաքականորեն հասուն մարդ, զիտելիքների հարկավոր պաշարով, կուլտուրական մտահորիզոնով, նվիրված կամունիզմի գործին, իր սոցիալիստական Հայրենիքի գործին»:

Կարմիր Բանակի կանոնադրութեանները ճշտիվ վորոշում են այն կարգը, վորն ապահովում է գորքերի մարտունակութեան անընդհատ աճումը: Կանոնադրութեանները—դա յուրաքանչյուր զինվորական ծառայողի վարքի որենքներն են, զինվորական ծառայողի, վորը պետք է միշտ, ամենուրեք և ամեն բանում արդարացնի Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի մարտիկի բարձր կոչումը:

Կարմիր Բանակի կանոնադրութեանները Կարմիր Բանակի մարտիկներին սովորեցնում են սոցիալիստական վերաբերմունք դեպի ժողովրդական և ոսպմական ունեցվածքը, բուլշեվիկյան աչալընութեան յեվ

ուսողման և պետական գաղտնիքի պահպանում : Կանոնադրույթյունները սովորեցնում են լիցենզիայի պետք է կատարելու թյուրապետել իր գեներին (հրացանին, սուսերին, դեղացրին, թնդանոթին, տանկին, մեքենային և այլն) և քաջարի կերպով, հմտորեն, արժանավայել կերպով ու պատվով պաշտպանել սոցիալիստական Հայրենիքը :

Կարմիր Բանակի մարտիկները զինվորական յերգում տալով, յերգվում են «առանց առարկուքյան կատարել զինվորական բոլոր կանոնադրույթյունները, կրամանատարների, կոմիսարների և պետերի հրամանները» : Կարմիր Բանակի կանոնադրույթյուններն ու հրամանատարների և կոմիսարների հրամանները անդրդպելի յեն, վոչ վոք և վոչինչ չի կարող խախտել այն : Կանոնադրույթյունների ու հրամանների խախտումը յերդման այն պարտավորույթյունների խախտումն է, վոր տրված են ժողովրդին, կուսակցույթյանը և բանվորա-գյուղացիական կառավարույթյանը :

«...վորպեսզի կուլջակին և Դենիկինին մինչև վերջ վոչնչացնել,—գրում էր Վ. Ի. Լենինը,—անհրաժեշտ է պահպանել հեղափոխական ամենախիստ կարգ ու կանոն, անհրաժեշտ է սրբորեն պահպանել որևէքներն ու Խորհրդային իշխանության պատվիրադրերը և հետեվել, վոր այն կատարեն բոլորը :

Միբիրում և Ուրալում կուլջակյան հաղթանակների որինակով մենք բոլորս պարզ կերպով տեսանք, վոք ամենափոքր անկանոնությունը, Խորհրդային իշխանության որևէքների ամենափոքր խախտումը, ամենափոքր անուշադրությունը կամ անփութությունը կալվածատերերի և կապիտալիստների անհապաղ ուժե-

ղացման, նրանց հաղթանակների առիթ են ծառայում» :

Կանոնադրույթյան կամ հրամանի ամեն մի խախտում ջլատում է զինվորական զիսցիպլինան և մեծ վնաս է հասցնում Կարմիր Բանակի մարտունակությանը : Կանոնադրույթյան կամ հրամանի ամեն մի խախտում ձեռնառու յե միմիայն մեր Հայրենիքի թըշնամիներին :

Պատմությունը զիտե վոչ քիչ այդպիսի փաստեր, յերբ մեկ կամ մի քանի մարտիկների կողմից կանոնադրույթյունը հանցավոր կերպով խախտելու պատճառով ընկել են ամբողջ յենթարտամունքներ, գործասներ և պարտություն են կրել խոչոր միավորումներ : Չապայեվի և չապայեվյան սրանծալի դիվիզիայի շատ մարտիկների կործանումը զգալի չափով հետեվանք էր զինվորական զիսցիպլինայի հանցավոր խախտման՝ գաղտնամասում ջուն մտած մարտիկների կողմից :

Խաղաղ պայմաններում կանոնադրույթյան խախտումները նույնպես հասցնում են ծանր հետեվանքների : Մի քանի տարի առաջ զինվորական ոկրուպներից մեկում տեղի ունեցավ մի այսպիսի դեպք :

Կարմիրբանակային Դ.-ն, մեկնելով դեպի պաշտպանական գաղալին գործարանի մոտ դտնովող պոստը, հակառակ պահակային ծառայության կանոնադրության, իր հետ վերցրեց մի քանի դլանակ : Գտնվելով պոստում, Դ.-ն վորոշեց ծխել, բայց նրա մոտ լուցկի չգտնվեց : Պոստը թողնելով առանց պահպանության Դ.-ն ուղղվեց դեպի հարեվան ժամապահը՝ լուցկի վերցնելու : Յերկրորդ ժամապահն էլ Դ.-ից լավը չէր, նա լուցկի ուներ և տվեց Դ.-ին : Ստանա-

լով լուցկին, Դ. -ն ուղղվեց գործարանի գուգարանը ծխելու: Սակայն դեռ Դ. -ն խելի չէր ծխել, յերբ հանկարծ նրա շուրջը բոցավառվեց գազը: Հրդեհն ընդգրկեց գործարանի ծխնելույղները և ձգտում էր դեպի պահպանվող որջեկտը: Միմիայն հրդեհի տեղն յկեող մարտիկների և գործարանի բանվորների յեռանդի շնորհիվ հաջողվեց փրկել գործարանը:

Ընդհանուրի դատաստարութեանն ու արհամարհանքին և արժանանում նա, ով հանցավոր կերպով խախտելով Կանոնադրութեաններն ու հրամանները, արատավորում և Կարմիր Բանակի մարտիկի բարձր կոչումը:

Մարտական իրադրութեան պայմաններում Կանոնադրային պահանջների յուրաքանչյուր, նույնիսկ ամենափոքր խախտումը կարող է վիթխարի վնաս հասցնել Կարմիր Բանակի մարտունակութեանը: Պատերազմում հրամանատարի հրամանը վճռում է մարդկանց բախտը: Մարտական հրամանն որենք է, վերի կատարմանը պիտի նվիրի իր վողջ ուժերը սոցիալիզմի յերկրի յուրաքանչյուր մարտիկ, առանց խնայելու իր արյունը, իսկ յեթե պահանջվի, նույնիսկ և իր կյանքը: Մարտական հրամանը կատարելու համար յուրաքանչյուր զինվորական ծառայող պետք է գործադրի իր վողջ արվեստը, գործի իմացութեանը, կուսակումը, ուղղական խորամանկութեանը յիվ կանոց չառնի վոչ մի խոչընդոտի առջեւ: Մարտական իրադրութեան մեջ հրամանատարի, կոմիսարի կամ պետի հրամանի չկատարումը կարող է հասցնել ծանրը հետեւյալներին: Կանոնադրութեաններն ու հրամանները ճիշտ կատարել պետք է սովորել այժմ, ամենորայ մարտական ու քաղաքական ուսուցման մեջ:

ԻՄԱՆԱԼ ՅԵՎ ԱՆՎԵՐԱՊԱՀ ԿԵՐՊՈՎ ԿԱՏԱՐԵԼ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԲՈԼՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՈՒ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ

Կանոնադրութեաններին նախաձեռնող ու անբասիր կատարումը ապահովում է մարտական գործողութեան հաջողութեանը: Դրան որինակ կարող են ծառայել ըստան լճի մոտ տեղի տեղեցած կռիվների ժամանակ ջոկատի հրամանատար ընկեր Չախարովի գործողութեանները: Սորհրդային Միութեան Հերոս կապիտան Մոչլյակը այդ մասին այսպես է պատմում.

Պուլիմյոտնայա բլրի համար մղված կռիվներում ակտիվ մասնակցութեան էր ցույց տալիս ջոկատի հրամանատար, զորազնդում լավագույն կոմյերիտական խմբակի կոմյերիտկազմակերպիչ Չախարովը: Յերբ մենք մոտեցանք Պուլիմյոտնայա բլրին, նա իր ջոկատի գլուխն անցած, առաջիններից մեկն էր, վեր նետվեց առաջ:

Իլրի գազաթի մոտ Չախարովը ճեղքեց ճապոնական դիժը և նրա միջով առաջ անցավ: Յերբ նրա ջոկատը ճեղքեց թշնամու պաշտպանութեան դիժը յեւ ներս խուժեց ճեղքվածքի մեջ, տեսավ, վոր ջոկատը բոլոր կողմերից շրջապատված է ճապոնացիներով: Յեթե հրամանատարը կորցնեք հոգու սոուլութեանը, յեթե հետ դառնար նա, նահանջելու հրաման տար, — անկասկած բոլոր համարձակները տեղն ու տեղը կընկնեյին: Բայց Չախարովը չչիթիվեց: Նա վայրկենապես հրամայեց մարտիկներին պառկել խոտի մեջ, ողտազործելով բոլոր ծածկույթները, և կրակ բացել հրացաններից և ձեռքի գնդացրից: Չոկատն իրեն շրջապատեց կրա-

կէ ողակով, մոտ չթողնելով թշնամուն: Մարտիկներըն ու նրանց քաջարի հրամանատարը դիտեյին, վոր նրանց աշխատանքի վողջ դասակը: Յեւ ողնությունը իրոք շուտ վրա հասավ:

Զախարովն ու նրա մարտիկները գործում էյին հերոսաբար, վորպես Կարմիր Բանակի մարտիկի կոչման արժանի կրողներ: Նրանց հերոսական վարմունքը լրիվ ու ամբողջութեամբ համապատասխանում էր ԲԳԿԻ կանոնադրությունների ցուցումներին, վողուն:

ԲԳԿԻ Հետեւակի Մարտական կանոնադրութեան 117-րդ հոդվածն ասում է.

«Հայտարարելով հակառակորդի տեղադրութեան թույլ տեղը (մնշված կրակե ոջախ, չգնդակոծվող տարածութուն յեւ այլն), ջոկատի հրամանատարը պետք է անհապաղ ձգտի այնտեղ, քեկուզ և դա ճամանակավորապես շեղի նրան իրեն մատնանշված ուղղութիւնից, գրոհելով քշնամու վրա քեկից ու քիկունքից:

Չոկատի հրամանատարը պետք է այդ դեպքում գործի համարձակ, առանց հետ նայելու, հիշելով, վոր նրա հաջողութունն անպայման կապաւորւմի վողջ դասակի և հարեւանների կողմից»:

Զախարովը հենց այդպես էլ վարվեց:

Մարտական կանոնադրութեան 123-րդ հոդվածը ւժիտեցնում է.

«Յեթե, չնայած համառ ու համարձակ գործողութիւններին, գրոհն հետ է մղված, ջոկատը պետք է ամբանա ձեռք բերած սահմանագծի վրա, ողտագործելով խրամատները, արկերից առաջացած փոսերը և այլն...»:

Հենց այդպես էր գործում Զախարովը, ընկնելով թշնամու ողակի մէջ:

ԲԳԿԻ Դաշտային կանոնադրութեան 198-րդ հոդվածը մատնանշում է. «Պաշտպանութեան մէջ առաջացած յուրաքանչյուր մեղքիւմք պետք է անհապաղ սգտագործվի՝ հարկածը դեպի խորք գարգացնելու համար: Բոլոր աստիճանների հրամանատարները պարտավոր են ձգտել դեպի ամեն մի մեղքիւմք, քեկուզ և դա նրանց դուրս բերելու լինի դեպի նոր ուղղութիւն, առաջուց նախանշվածին չհամապատասխանող...»:

Սասանի և Սալխին-Գոլի մոտ տեղի ունեցած կռիվներում մարտիկները, հրամանատարները և քաղաչխատողները, գործում էյին այնպես, ինչպես դա պահանջում են Կարմիր Բանակի կանոնադրությունները, և ճակոտական գորքերը ջախջախվեցին:

Սորհրդային Միութեան Մարշալ ընկ. Վորոշիլովը Կարմիր Բանակի վողջ անձնակազմից պահանջում է տնքասիր կերպով իմանալ ու կատարել կանոնադրությունները: 1939 թ. ուսումնական տարվա մարտական և քաղաքական պատրաստութեան խնդիրների վերաբերյալ իր հրամանում ընկեր Վորոշիլովն ընդգրծում էր, վոր «Հրամանատարական կազմի և պետկազմի վողջ սրտրաստությունը պետք է հենկի ամենից առաջ ԲԳԿԻ կանոնադրութիւնները, հրամանները և հրահանգումները գերագանց կերպով իմանալու և այն պրակտիկայում հմտորեն գործադրելու վրա»:

Առաջին պայմանը, վորն ապահովում է Կարմիր Բանակի մարտիկների զինվորական բարձր ղիսցիպլինան, դա կանոնադրային պահանջների գերագանց ու-

սումնասիրութիւնն է: Յերբեք չի կարելի մոռանալ կանոնադրային պահանջները: Վերաբերում է դա մարտիկների զինվորական կեցվածքին և արտաքին տեսքին լիք՝ մարտական տեխնիկայի պահպանմանն ու խնայմանը—ամեն ինչի մեջ պետք է լինի բարձր պահանջկոտութիւն: Կանոնադրութիւններէ սամենափոքրը խախտումը կամ փոքր բանի մեջ անկարգապահութեան և սանձարձակութեան տարրերի ցուցաբերումը նպաստալուր հող են ստեղծում ե՛լ ալելի լուրջ հանցադործութիւններէ համար:

Կարեւորագույն տարրը, վորը բնորոշում է զորամասի մարտունակութիւնը և նպաստում է դիտցիպլինայի և կարգակերպւածութեան արմատալորմանը, հանդիսանում է ներքին կարգ ու կանոնը ԲԳԿԲ զորամասերում: Զորամասի ներքին կարգ ու կանոնը յուրաքանչյուր զինվորական ծառայողի կենցաղում և ուսման մեջ ունեցած վարքի որենքն է, ներքին կարգ ու կանոնը—դա յենթարտաժամունքի զորամասի կյանքի հիմքն է:

Յուրաքանչյուր մարտիկ պետք է ստանձնապես ճշտիվ իմանա և կատարի կանոնադրութիւններէ այն հոգւածները, վորոնք բնորոշում են նրա անմիջական պարտականութիւններէ շրջանակը:

Կանոնադրութիւններէ և հրահանգումներէ ուսումնասիրութիւնը չի կարելի սահմանափակել միմիայն դրան նվիրած հատուկ պարագմունքներով: Կանոնադրութիւններէ պահանջները պետք է յուրացնել ամեն որ պրակտիկայում, մարտական ու քաղաքական պատրաստութեան ընթացքում, զորանոցում,

հրաձգարանում և այլն: Առանց դրան անհնարին է լայլ յուրացնել կանոնադրութիւններէ պահանջները: Կարմիր Բանակի մարտիկը պետք է մշտապես ձգտի առ այն, վորպեսզի կարելի լինի ստանալ վորքան կարելի յէ շատ պրակտիկ հմտութիւններ՝ կանոնադրութիւններէ պահանջները կատարելու դժով: Կարմիր Բանակի մարտիկի կոչումը պարտալորեցնում է դերագանց կերպով իմանալ ԲԳԿԲ կանոնադրութիւնները, խստորեն պահպանել այն, որինակելի ու հստակ կերպով կատարել:



Պատասխանատու խմբագիր՝

Զ. Պողոսյան

Սրբազրիչ՝ Հ. Ավետիսյան

Տեխնիկական խմբագիր՝

Ս. Դովլաթյան

Հանձնված է արտադրության

19/IV 1940 թ.:

Մտորագրված է տպագրու-

թյան 23/IV 1940 թ.:

Գրքի ծավալը 21/8 տպագրա-

կան մամուլ:

Պատվեր № 1198:

Տիրաժ—5.000:

Գլավիտի լիազոր № 2645:

Ա. Ֆ. Մյանսկիյանի անվան «Զարյա Վոստոկա» հրատարակ-

չության տպարան: Թբիլիսի, Ռուսթավելու պող. № 36:

«Ազգային գրադարան»



NL0220902

2 Г Н

40. 359

**Библиотека красноармейца
Строжайшая воинская
революционная дисциплина —
основа боевой мощи
Красной Армии**

ТБИЛИСИ

1940 г.